Հայաստանի Հանրապետություն
«Սարոս-Աուդիտ» ՍՊԸ

THE CENTRE FOR ACCOUNTING SERVICE
SAROS AUDIT

ՀՀ, ք. Երևան, Բրյուսովի 26 Tel/Fax. 547 026 E-mail: saros_audit@mail.ru

«09» ապրիլի 2007թ.

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա թիվ ԱԾՆ 045
տրված ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

*«ՌԱՄԿՈ» Ապահովագրական ՍՊԸ*

*2006թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների փաթեթի վերաբերյալ*

## ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«ՌԱՄԿՈ» Ապահովագրական ՍՊԸ մասնակիցներին*

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՌԱՄԿՈ» Ապահովագրական ՍՊԸ -ի, հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 1 հունվարի 2007թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտը իր մեջ ներառում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք թույլ են տալիս գնահատել հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիությունը:

Մենք աուդիտն անցակացրեցինք աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինասական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

*Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները «ՌԱՄԿՈ» Ապահովագրական ՍՊԸ-ի ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2007թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը, կազմված են ՀՀ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների և ՀՀ Օրենսդրության պահանջներին համապատասխան:*

*Հաստատված է*
*«ՍԱՐՈՍ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ*
*Տնօրեն* *Կ. Ղոնյան*
*Որակավորման վկայական թիվ 139*

*Աուդիտոր* *Ռ. Բագրացյան*
*Որակավորման վկայական թիվ 088*